

ի մի վայր ժողովէր, եւ **հրաման պատուիրանի տայր ընդ յաջմէ կողմանէ իւրոյ գնդին պատրաստ լինել ընդդէմ Հայոց զաւրավարին**¹:

Իսկ արին Վարդան յառաջ մատուցեալ եւ զաւազանին հարցանէր եւ միաբան ամենեցուն խրատու զզաւրագլուխսն կարգէր: Զգունդն առաջին տայր ի ձեռն իշխանին Արծրունեաց, եւ նիզակակից նմա՝ զմեծ իշխանն Մոկաց... Եւ զգունդն երկրորդ տայր ի ձեռն Խորենայ Խորխոռունոյ, եւ նիզակակից նմա՝ զԸնծայինն եւ զՆերսէս Քաջբերունի: Եւ զգունդն երրորդ մատուցանէր ի ձեռն Թաթլոյ Վանանդացոյ, եւ նիզակակից նմա հրամայէր զՏաճատ Գնթունի... **Յանձն իւր առնոյր զգունդն չորրորդ**, եւ նիզակակից իւր զքաջն Արշաիր եւ զհարազատ եղբայրն իւր զՀամազասպեան: **Կարգէր եւ կազմէր զճակատն՝ յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտին** դէմ յանդիման Արեաց գնդին, **առ ափն Տղմուտ գետոյն**²: Եւ իբրեւ այս այսպէս պատրաստեցան, երկոքեան կողմանքն լի սրտմտութեամբ եւ մեծաւ բարկութեամբ զայրանային եւ **զազանացեալ զաւրութեամբ յիրեարս յարձակէին**, եւ ամբոխ աղաղակին երկոցունց կողմանց իբրեւ **ի մէջ ամպոց շփոթելոց ճայթմունս գործէր**, եւ հնչումն ձայնից **զքարանձաւս լեռանցն** շարժէր... Անդ էր տեսանել շտապ մեծի տազնապին եւ զաղէտս անբաւ տարակուսանացն երկոցունց կողմանցն՝ առ ի յանդուգն յարձակմանէն զմիմեանս բախելով... Եւ խումբ արարեալ ամենայն բազմութեանն՝ **զգետն ի մէջ փակէին**, եւ զանգիտեալ գունդն Պարսից ի դժուարութենէ գետոյն՝ **զտեղեան զեռալ** սկսան: **Իսկ գունդն Հայոց հասեալ անցանէին, ձի ի վերայ առեալ՝ յարձակէին մեծաւ զաւրութեամբ**, սաստկապէս բախեալք ընդ միմեանս՝ յերկոցունց կողմանց բազում վիրաւորք յերկիր անկեալ դիաթաւալ խաղային:

¹ Այս վերջին՝ խիստ կարեւոր հատուածն ակնարկում է, որ ճակատամարտի նախորդ օրը հայկական ձախ՝ Խորէն Խորխոռունու թելը Վարդան Մամիկոնեանի կազմած ծրագրի համաձայն հետետողականօրէն **սեղմել է** (Տղմուտի արեւելեան ափին իջնող բլրաշարի վրայից) Պարսից զօրքի ռազմերթի յետնապահ խմբերին դէպի Աբարաբաշի գետանցի արեւմտեան ափը, ինչով նրանց **աջ թելում** («յաջմէ կողմանէ իւրոյ գնդին») յատուկ լարում է ստեղծել:

² Ի դէպ, նշելի է, որ Եղիշէն Աւարայր անունը լոկ մի տեղ է տալիս, այն է՝ իր երկի ասարտական բանաստեղծական զեղումների ենթազլխում. «...նովաւ եւ վկայքն ցնծացեալ բերկրին: Նովաւ եւ **դաշտն Աւարայրի** պայծառացեալ ծաղկայից լինի, ոչ յանձրեաբեր ամպոց, այլ ի սուրբ եւ յարինաբուխ վկայից ցանեալ եւ ցրուեալ սպիտակութիւն սուրբ ոսկերացն: Յորժամ կոխեսցեն ամենավաստակ ոտք խոստովանողին զլայնատարած **տեղիս պատերազմին**, թէպէտ եւ երկիր իցէ ըստ բնութեան, յորժամ կենդանի մարտիրոս ընդ նա շրջեսցի, կենդանի առ կենդանիս երթեալ՝ ամենայն աշխարհին կրկին լինի կենդանութիւնն» (Եղիշէ 1957, 188-189, է յեղանակ [Բ], նախ. 58-59, էջ 746):